ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ԱԾԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՐԻՆԱ ԿԱՐԱՊԵՏԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՇՈՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ , բ.գ.դ. պրոֆեսոր

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……-……2-4……

2.ԱԾԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ……5-10……

3..ԱԾԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ……10 - 16……

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……17……..

5..ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ……18……

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը,պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել,պաշտել, սիրել, զգվել հարազատ մոր հարազատ լեզուն.այս սերը միայն կբացի մեր առջև մեր լեզվի ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը:

(Ղ. Աղայան)

Հին աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ մեր սքանչելի ու ինքնատիպ հայոց լեզուն է ,որը նաև շրջապատի իրականության ճանաչման միջոց է:

Ինչպես ամեն մի գիտություն ,այնպես էլ լեզվաբանությունն ունի իր ուսումնասիրության առարկան:Անառարկելի է ,որ պատկերավոր,դիպուկ,ճկուն և հույզերով լի հարուստ խոսքը մարդուն օգնում է լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, պաշտպանել իր և իր միջավայրի հիմնախնդիրները,շահերը, բանակցություններին հաղորդել սեփական դիրքորոշումները:

Գիտական խոսք կարելի է մշակել միայն քերականություն ուսումնասիրելով:Սրա միջոցով է աշակերտը սովորում խնդրառությունը, համաձայնությունը, շարադասությունը,կետադրությունը և այլն:Քերականության ուսուցումն ավելի շատ պետք է ունենա գործնական բնույթ: Ավելի քիչ քերականական սերտում,ավելի շատ կենդանի խոսք,ընթերցանություն, գրավոր ու բանավոր շարադրանք,լեզվառճական հնարքների հարստացում:Հարկավոր է երեխաներին շատ գրել տալ փոքրիկ շարադրանքներ՝գործածելով տվյալ խոսքի մասին բնորոշ հատկանիշները: Գործնական օրինակների հիման վրա երեխաները պետք է գիտակցեն կապակցված խոսքի բովանդակությանը ներկայացվող պահանջների կարևորությունը: Այդ նպատակով հարկավոր է առաջադրել մի քանի փոքրիկ բնագրեր, գտնել դրանց նմանությունները, համեմատել բառամթերքը, որոշել, թե որ բառերն ու արտահայտություններն են տեղին, որոնք կարելի է փոխարինել ավելի դիպուկ ձևերով :

Քերականական յուրաքանչյուր սահմանում պիտի հաստատվի համապատասխան օրինակներով և ամրակայվի վարժությունների միջոցով: Սահմանումը պետք է լինի հստակ, կարճ ու պարզ, ընդգրկի լեզվական տվյալ կարգի, երևույթի հիմնական հատկանիշները:Երկրորդական հատկանիշները, պետք է ներկայացվեն վարժությունների,բնագրերի վերլուծման ժամանակ:

Ավելի քիչ քերականության սերտում, ավելի շատ կենդանի խոսք, ընթերցանություն, գրավոր ու բանավոր շարադրանք, լեզվառճական հնարքների հարստացում: Ցանկացած խոսքի մաս անցնելիս աշակերտին պետք է հանձնարարել գրել փոքրիկ շարադրանք՝ գործածելով տվյալ խոսքի մասին բնորոշ հատկանիշները: Սա հնարավորություն կտա աշակերտին ավելի լավ յուրացնել խոսքի մասերը՝ տեսական գիտելիքները համադրելով գործնական աշխատանքներով:Ածականը կազմության տեսակետից շատ հարուստ է և բազմազան: Հայերենի բառակազմության տարբեր եղանակներն իրենց տարբեր դրսևորումներով դեր ունեն ածականի կազմության մեջ: Ածականի ուսուցման ժամանակ կարևոր է հարցերի միջոցով ածականները որոշելու կարողության ձևավորումը: Ածականի իմաստային նշանակության էությունը ընկալելի դարձնելու նպատակով երեխաները կատարում են վարժություններ , որոնք նպաստում են այն համոզմունքի ձևավորմանը , որ հատկանիշն առարկայից անբաժան է , և նախադասության մեջ հատկանիշ ցույց տվող բառը հանդես է գալիս գոյական անվան հետ: Այս վարժությունների միջոցով երեխաները համոզվում են , որ բառերը կարող են առարկաների հատկանիշները ներկայացնել: Ածականի ուսուցման ժամանակ կարևոր է հարցերի միջոցով աշակերտների մեջ ամրակայել կարողության ձևավորումը: Ածականի իմաստային նշանակության էությունը ընկալելի դարձնելու նպատակով երեխաները կատարում են վարժություններ , որոնք նպաստում են այն համոզմունքի ձևավորմանը , որ հատկանիշն առարկայից անբաժան է , և նախադասության մեջ հատկանիշ ցույց տվող բառը հանդես է գալիս գոյական անվան հետ:Ածականի ուսուցման ժամանակ կարևոր է հարցերի միջոցով ածականները որոշելու կարողության ձևավորումը: Ելնելով իրենց գրած օրինակներից՝ աշակերտները ձևակերպում են ածականը բնութագրող կանոնը:

Կարևոր է այն հանգամանքը, որ ածականը բնութագրելիս աշակերտները միշտ նշեն գոյական կամ առարկա անունը ՝ « չասեն՝ ածականը ցույց է տալիս հատկանիշ » 1 , որովհետև հատկանիշ կարող են ցույց տալ նաև մակբայները և գոյականները: Այս ամենից հետո ուսուցիչը ընդհանրացնում է ածական անվան խոսքիմասային հատկանիշները, ձևակերպում կանոնը: Հաղորդման դասի կարևոր նպատակներից է ուսումնական նյութը աշակերտներին սովորեցնել հենց դպրոցում, դասի ժամանակ: Կարելի է հանձնարարել տասը բոպեանոց շարադրություն գրել, որը կնպաստի յուրացված նյութի ամրապնդմանը, որից հետո կկատարեն վարժություններ: Դրանց օգնությամբ աշակերտների մոտ կզարգանա գրավոր և բանավոր խոսքը:

ԱԾԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Խոսքի մասերն ըստ իրենց հիմնական իմաստի խոսքի մեջ տարբեր դեր և կշիռ ունեն: Օրինակ՝ գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը և մակբայն իրենց հիմնական իմաստով զգալիորեն տարբերվում են կապից և շաղկապից: Կապերն ու շաղկապներն՝ իբրև սպասարկու, օժանդակ բառեր, ցույց են տալիս հարաբերություններ՝ չունենալով նյութական իմաստ: Մինչդեռ վերաբերականներն ու ձայնարկությունները երանգավորում են խոսքը:

Երեխաներին հիշեցնում եմ ածականի հարցերը / ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր/ :Աշակերտները բերում են գոյականներ և վրան դնում ածականներ: Հենց այս ժամանակ բացատրում եմ ,որ ածել նշանակում է վրան դնել:Ուրեմն՝ ածական նշանակում է վրան դնել: Ածականը դրվում է գոյականի վրա, ցույց է տալիս առարկայի հատկանիշ: Ածականները իրենց արտահայտած իմաստով բազմազան են, նրանք տարբեր կողմերից են բնութագրում առարկան:

Աշակերտներից մեկին կանչում եմ գրատախտակի մոտ, գրում է գոյականներ, իսկ մյուս աշակերտները այդ գոյականներին ավելացնում են ածականներ ՝

տվյալ առարկաներին բնորոշ հատկանիշներով:

ՄԵՂԱՆ-մեծ,փոքր ,մաքուր, կլոր, քառակուսի,փայտե

ՀԵՌԱԽՈՍ-գեղեցիկ, սև, հին ,նոր, խելացի

ԲԱԺԱԿ- բյուրեղապակյա,նախշազարդ,մեծ

ՄԱՐԴ-ծեր, երիտասարդ, առույգ, մեծահոգի,բարի

ՄԵՐ-մեծ, ինքնամոռաց, ազնիվ, շահադիտական

ՎԱԽ- նյարդային, գիշերային,մեծ

ԱՆԶՐԵՎ-հորդառատ, տեղատարափ, մանր

Այնուհետև ավելացնում եմ, որ ածականները նախադասության մեջ գործածվում են գոյականական և բայական անդամի լրացում:

Ածականներն ըստ իրենց արտահայտած բնույթի լինում են երկու տեսակ՝ որակական և հարաբերական:

ՈՐԱԿԱԿԱՆ ածականները ցույց են տալիս առարկաների հատկանիշներ-մեծ,փոքր,ծուռ, հաստ,բարակ

Առարկաների ներքին հատկանիշներ-քաղցր ,թթու,ցուրտ, ջերմ տաք

Գունային հատկանիշներ-կարմիր,սպիտակ, դեղին,ոսկեգույն

Մարդկանց մտավոր բարոյական և այլ հատկանիշներ-ագահ, համեստ, հեզ, ուշադիր,նենգ

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշը մի այլ առարկայի հարաբերությամբ, այսինքն՝արտահայտում են առարկայի կապը , հարաբերությունը ուրիշ առարկայի հետ: Ինչպես՝ մարդկային խիղճ, բրոնզե արձան, հրեղեն ձի, հայրական տուն,լուսե երազ, փայտյա տնակ:

ԱԾԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԸ 1.հատկություն 2.վերաբերություն	ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆ. 1.չթեքվող
ՏԵՍԱԿՆԵՐԸ 1.որակական 2.հարաբերական	ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԵՐԸ 1.գոյական անդամի լրացում 2.բայական անդամի լրացում 3. ստորոգյալի մաս

Ածականները կարող են արտահայտել ամենատարբեր բազմազան նշանակություններ՝ գույն (կանաչ, կապույտ), մեծություն (մեծ, փոքր), տարածական ու ժամանակային հարաբերություններ (լեռնային, հեռավոր), նյութի հարաբերություն (փայտե, թղթյա), ներքին ու արտաքին հատկանիշներ (գեղեցկագույն, իմաստուն) և այլն: Բայց այս բազմապիսի իմաստներ արտահայտող բառերը միավորվում են ածական անվան կարգի տակ, և նրանց հատկանշային նշանակությամբ էլ պայմանավորված են այդ բառերի շարահյուսական նույն կիրառությունները:Ածականի մասին տրված այս լրացուցիչ տեղեկությունները հնարավորություն են տալիս մինչ այդ առաջադրված իմաստաբանական սահմանման կողքին տալ նաև նրա ձևաբանական սահմանումը՝ հենվելով նրա քերականական հիմնական հատկանիշների վրա: Այն բառերը, որոնք պատասխանում են ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը և չեն հոլովվում ու չեն խոնարհվում, կոչվում են ածական անուն կամ ածական: Այս բնորոշումը երեխաները ոչ միայն պետք է սովորեն, այլև կարողանան բացատրել: Այսպես՝ երեխաները բացատրում են, որ իրենց ընտրած բառերը ածական են, որովհետև պատասխանում են ինպիսի՞, որպիսի՞,

ո՞ր հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը:

Այնուհետև մանրամասնում եմ, որ որակական ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշ, որը հատուկ է տվյալ առարկային՝ անկախ ուրիշ առարկաներից: Նշված հատկանիշները առարկան կարող է ունենալ առավել կամ նվազ չափով: Սրանով էլ պայմանավորված՝ որակական ածականներն ունենում են համեմատության աստիճաններ: Հայերենում համեմատության աստիճանների արտահայտման միջոցներ են ածանցումը և սպասարկու բառերը, որոնցով ոչ թե նոր բառեր են կազմվում, այլ միևնույն բառի ձևեր, փոխվում է քերականական իմաստը: Դրանցից մեկը վերլուծական կազմություն է (ավելի հզոր), մյուսները՝ համադրական (ամենահզոր, հզորագույն): Ժամանակակից հայերենում տարբերակվում է ածականի համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական: Դրական աստիճանը սկզբնաձևն է, հատկանիշն արտահայտվում է առանց համեմատության: Դրական աստիճանը սկզբունքորեն տարբերվում է մյուսներից նրանով, որ այս դեպքում արտահայտվում է բացարձակ հատկանիշ: Որակական ածականները կարող են լինել նաև ստորոգյալի բաղադրիչ:Ածականը կարող է գործածվել նաև գոյականաբար/փոխանվանաբար/: Առաջին երկու ժամերը հատկացնում եմ ածականը՝որպես խոսքի մաս ,ածականի շարահյուսական պաշտոնները թեմաներին:

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Սկզբում պարզաբանում եմ անհասկանալի հարցերը, ստուգում տնային աշխատանքները ,ապա բացատրում եմ որակական ածականի համեմատության աստիճանները:Բայց մինչև համեմատության աստիճաններին անցնելը կրկնում եմ ,,Բառերի տեսակներն ըստ կազմության,,թեման: Գրատախտակին գծում եմ հետևյալ գծապատկերը.

ՊԱՐԶ	ԱԾԱՆՑԱՎՈՐ	ԲԱՐԴ	ԲԱՐԴ ԱԾԱՆՑ.
հին	լուսավոր	շատախոս	քարքարոտ
լայն	ընդարձակ	կանաչազարդ	այլմոլորակային
մութ	բրոնզե	մարդաշատ	հեռուստատեսային
մեծ	կեղտոտ	աշխատասեր	հարթավայրային
չար	տգեղ	եռագլուխ	կաղնեփայտե
բարի	կարմրավուն	նորանոր	հրացանավոր

Անցում եմ կատարում գոյական խոսքի մասին և ,,մտագրոհ,,մեթոդի միջոցով կրկնում գոյականի կազմությունը:Աշակերտները հստակ պատասխանում են ,որ այն մասնիկները որոնք ավելանում են բառին և կազմում գոյականներ, կոչվում են գոյականակերտ ածանցներ:

Այստեղից հետևություն ՝ այն մասնիկները ,որոնք ավելանում են բառին կամ արմատին և կազմում ածական, կոչվում են ածականակերտ ածանցներ : Բարդ և ածանցավոր ածականները կարող են կազմվել այսպես՝ երկու գոյականից ՝արև և շող-արևաշող, ածականից և գոյականից՝գանգուր և հեր- գանգրահեր, նախածանցից և գոյականից-ան և տուն-անտուն, գոյականից և վերջածանցից-քաղաք և ային- քաղաքային :

Վարժություն 1. ա/ Տրված տեքստից դուրս գրել ածականները , գծիկով առանձնացնել բաղադրիչ մասերը , որոշել կազմությունը՝պարզ, բարդ ,ածանցավոր ,ապա նրանցից երեքով կազմել նախադասություններ:

Ոսկեկեղև ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները՝ կախարդիչ գույներով ու ձևերով: Իսկ Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով

նրա՝ կրակե բոցերի պես ծփծփող, ճաճանչագեղ մազերից:/**Ավ. Իսահակյան**/

բ/ Գետի ափին ,այս ուռենու տակ
Իմ մանկությունն է անցել երազուն,
Խաղացել է նա գետում այս <u>հստակ,</u>
Ոսկի է փնտրել այս տաք ավազում:
Նա թառել է այս ծառին դալար, **/Համո Սահյան/**

գ/Երկյուղով մտել այս այրերը մութ:
Ու կածաններում այս օձագալար
Թափառել է նա մինչև մայրամուտ:
Եվ ծիծաղի ալիքներն է ջինջ
Տրվել նա մի օր ջրերին խենթուկ,
Եվ ուրախ երգով տարել ամեն ինչ
Ու ,սակայն ,ոչինչ չեն բերել ետ:
/Վահագն Դավթյան/

Ածականները կարող են լինել ինչպես գոյական անդամի լրացումներ, այնպես էլ բայական անդամի լրացումներ ;

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Աշակերտները բացատրում են իրենց աշխատանքներում գործածած ածականների կազմությունը, հատկանիշը: Առանձնացնում եմ որակական ածականները , որոնք անմիջականորեն արտահայտում են առարկայի ներքին և արտաքին այնպիսի հատկանիշ, որը հատուկ է տվյալ առարկային:Այնուհետև ավելացնում եմ, որ որակական ածականը ունի համեմատության աստիճաններ ,որոնք ցույց են տալիս

տվյալ առարկայի չափը: Ըստ այդ չափի համեմատության աստիճանները երեքն են՝ դրական, բաղդադական և գերադրական: Դրական աստիճանը ածականի սկզբնաձևն է, քանի որ հատկանիշն արտահայտվում է առանց համեմատության: Դրական աստիճանը սկզբունքորեն տարբերվում է մյուսներից, որովհետև այն արտահայտում է բացարձակ հատկանիշ:

Օրինակ՝ Իմ **հայ** ժողովուրդ,

Քո **հին** անունով,կյանքով **դժվարին**՝

Ծանր կանգնած ես այն **մեծ** նժարին,

Որ **ծանր** է կշռում,ո՞չ թե արկերով,

Այլ երջանկության մշտավառ հրով,

Խաղաղ ծերությամբ,շիկնանքով սիրո:

/ **Պարույր Սևակ/**

Կապույտը հոգու աղոթանքն է ,քո՞ւյր,

Կապույտը-թախիծ,

Կապույտը-կարոտ **թափանցիկ**, **մաքուր**

Ու **հստակ** ու **ջինջ:**

Կապույտը քրոջ աչքերի **անհուն**

Առավոտն է **թաց:**

Կապույտում հոգիս մի **հին** իրիկուն

Անզոր հեծկլտոց:

/Եղիշե Չարենց/

Բոլոր ընդգծված ածականները որակական ածականի դրական աստիճանի ածականներ են , որոնք ցույց են տալիս առարկաների հատկությունները՝ առանց ուրիշ

առարկաների նույն հատկությունների հետ համեմատելու:

Հայ ժողովորդ **, հին** անուն, **դժվարին** կյանք, **մեծ** նժար ,**խաղաղ** ծերություն, **թափանցիկ** կարոտ, **մաքուր** կարոտ,**հստակ ու ջինջ** կարոտ, **անհուն** աչքեր,**թաց** առավոտ, **հին** իրիկուն, **անզոր** հեծկլտոց : Համեմատության աստիճանները մեծապես կապված են բառերի բառային նշանակության հետ: Առարկայի հատկանիշը կարող է ցույց տալ տվյալ առարկայի նվազ կամ ավել լինելը : Դրան համապատասխան՝ լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնցով արտահայտվեւմ են նույն հատկանիշի որակային աստիճանավորումները: Դրանցում գլխավորը բառային միջոցներ են: Կան նաև հատկանիշի աստիճանավորումների արտահայտման այլ միջոցներ ևս, ինչպես՝ բառային կրկնությունը՝ սաստկականության իմաստ արտահայտելու համար (մեծ-մեծ, սուր-սուր, նեղ-նեղ), սաստկական և նվազական իմաստ արտահայտող ածանցները՝- (ա) գույն (մեծագույն), -ին (խորին) , - ավուն (կարմրավուն) և այլն: «Հայ, ինչպես նաև օտար լեզուների քերականությունների մեջ ածականներն ըստ իրենց արտահայտած իմաստի բաժանվում են երկու գլխավոր խմբերի՝ որակական և հարաբերական» 2 :Որակական ածականներն արտահայտում են առարկայի որակական հատկանիշներն անմիջականորեն, ուղղակի կերպով,առանց միջնորդվածության:

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ աստիճանը ցույց է տալիս հատկանիշի առավել կամ պակաս դրսևորումը առարկայի կամ առարկաների մեջ՝ այլ առարկայի կամ առարկաների նույն համեմատությամբ: Բազդատական աստիճանը կազմվում է ածականի դրական աստիճանին /ուղիղ ձևին/ ավելացնելով ավելի, պակաս, նվազ, մի քիչ, քան, մի փոքր, քիչ բառերը:Ինչպես՝

Երեմիան ավելի աշխատասեր է : Դավիթը պակաս աշխատասեր է;Մեր դասարանի տղաները ավելի ջանասեր են , քան զուգահեռ դասարանի տղաները: Իմ պապիկը Արամ պապիկից/ավելի/ խելացի է: Մահվանից /ավելի/ դառն էին այդ խոսքերը:Իմ քույրիկը քիչ աշխատասեր է : Բաղդատել նշանակում է համեմատել, այսինքն՝ցույց է տալիս առարկայի հատկանիշի առավել կամ պակաս լինելը համեմատվող մեկ այլ առարկայի նույն հատկանիշից:

Ամպրոպից հետո

Երկինքն **ավելի** կապույտ լինում,

Խոտերն **ավելի** կանաչ են լինում

Ամպրոպից հետո:

Ճերմակ շուշանը **ավելի ճերմակ**

Կանաչն **ավելի կարմիր** է լինում

Եվ մեղրածաղիկն **՝ավելի դեղին**:

/Համո Սահյան/

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի գերազանցությունը համեմատվող մյուս բոլոր առարկաների նույն հատկանիշից կամ արտահայտում է բացարձակապես առավելագույն հատկանիշ՝ առանց համեմատության:Գերադրական աստիճանը կազմվում է կա՛մ –ամենա նախածանցով, կա՛մ -ագույն ածանցով ,կա՛մ ամենից բառով , որը գրվում է առանձին: Երեխաներին բացատրում եմ , որ թույլատրելի չէ ամենա- և -ագույն ածանցների համաժամանակյա կիրառումը: Աշակերտներից մեկին կանչում եմ գրատախտակի մոտ , իսկ մյուս երեխաներից պահանջում , որ իրենց աշխատանքային տետրերից բերեն ածականի դրական աստիճանի օրինակներ : Եվ գրատախտակին գրում ենք բերված օրինակներից մի քանիսը և դրանք դարձնում գերադրական աստիճանի:

Ինչպես՝ Նվազ- -ագույն, փոքր- -ագույն նարնջագույն,կաթնագույն

մեծ -ագույն, բարձր- -ագույն արծաթագույն,կարմրագույն

լավ- -ագույն, նոր- -ագույն վարդագույն, ոսկեգույն

Աշակերտներին բացատրում եմ , որ առաջին շարքի բառերին մենք կարող ենք ավելացնել **ամենից** բառը և նորից կստանանք գերադրական աստիճանի բացարձակ որակ:

Այսպես՝ նվազագույն- ամենից նվազ

մեծագույն- ամենից մեծ

լավագույն-ամենից լավ

փոքրագույն-ամենից փոքր

բարձրագույն-ամենից բարձր

նորագույն-ամենից նոր

նվազագուն-ամենից նվազ

գեղեցկագույն-ամենից գեղեցիկ

Երկրորդ շարքի բառերը ցույց են տալիս տվյալ առարկայի գույնը: Եթե մենք կարողանում ենք ամենա- ածանցով բառը փոխարինել ամենից բառով ,ուրեմն՝ ածանց է:

Եվ ինչ իմանաս չենք հանդիպելու

Ամենավերջին ժամի ժամանակ,

Ամենավերջին անսահմանության,

Ամենավերջին սահմանի վրա,

Գուցե հենց այստեղ և այս նույն պահին:

/Համո Սահյան/

Կան գերադրականի արտահայտման շարահյուսական այլ միջոցներ ևս, օրինակ՝ ածականի կրկնության հոգնակի սեռականի կամ բացառականի ձևով, ինչպես՝ /գեղեցիկներից գեղեցիկը, մեծերից մեծը/և այլն:

Ածականը կարող է կիրառվել գոյականաբար /փոխանվանաբար/; Այս դեպքում այն հոլովվում է, հոդ ստանում, կարող է նաև հոգնակի թիվ ստանալ:

1. **Աղքատ** երիտասարդը սիրահարված էր **գեղեցիկ** մի աղջկա:

Բայց ո՞վ **աղքատին** աղջիկ կտար :

2.Օդը **ցուրտ** էր,սարսռուն քամին մտնում էր ոսկորներիս մեջ:

Ցուրտը սարսռուն էր, քամին մտնումէր ոսկորներիս մեջ:
Վերջում անդրադառնում եմ որակական այն ածականներին, որոնք համեմատության աստիճաններ չունեն,ինչպես՝ ամայի,ամուրի, ամուլ, ստերջ,անոթի, կաղ, վերջին, նախկին, բոբիկ, համր կույր, կաղ, տկլոր,մերկ և այլն:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Հարաբերական ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշը մի այլ առարկայի հարաբերությամբ,այսինքն՝ արտահայտում են առարկայի կապը, հարաբերությունը ուրիշ առարկաների հետ: ա/ Հարաբերական ածականները չունեն համեմատության աստիճաններ:բ/ Հարաբերական ածականները սովորաբար չունեն հականիշներ: Հարաբերական ածականները տարբերվում են որակական ածականներից նաև շարահյուսական կիրառությամբ::Հարաբերական ածականները սովորաբար լրացնում են նախադասության գոյականական անդամներին : Իսկ որակական ածականների մի զգալի մասը կարող է գործածվել բայերի հետ՝ հանդես գալով որպես պարագա: Ինչպես արդեն նշեցինք, հարաբերական ածականների ցույց տված հատկանիշը միջնորդավորված է: Այս ածականների մեջ հատկանիշն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ: Եթե ընդհանուր ձևով սահմանենք հարաբերական ածականների նշանակությունը, ապա կարող ենք ասել, որ նրանք արտահայտում են հարաբերություններ ածականի նյութական բովանդակությունը դրսևորող առարկաների նկատմամբ: Հարաբերական ածականներն արտահայտում են առարկաների տեղային –տարածական՝ լեռնային, դաշտային, գյուղական, ծովափնյա, ժամանակային՝ գարնանային, երեկոյան, քառամյա, ծագման, պատկանելության ու հատկացման ՝ ոսկյա, ձյունե, ունենալու և չունենալու՝ անգլուխ, անհոգի, նմանության՝ ալիքաձև, գմբեթարդ, քաղաքատիպ և այլն: Հարաբերական ածականները ցույց են տալիս տարբեր բնույթի հատկանիշներ:

Հրե աղջիկ, գիշերների դու թագուհի
Ճառագայթող քո աչքերով դու եկար

Ոսկե բոցով լցրիր հոգիս իմ տկար,

Լուսե՛ աղջիկ,դու միշտ հաղթող ու միշտ հեզ:

/ **Համո Սահյան**/

Վարժություն 1. Տրված բաղադրիչների միացումով կազմել հարաբերական ածականներ:

1Հուր…… նվագ

2.Արծաթ……..պայծառ

3.Մայր……ե

4.Ողբ……ենի

5.Մարմար…….շող

6.Լույս……բորբոք

Վարժություն 2. Հետևյալ հատվածից դուրս գրել ածականները, որոշել տեսակը՝ որակական և հարաբերական. Ոսկեկեղև ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները՝ կախարդիչ գույներով ու ձևերով: Իսկ Ադամ ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով նրա կրակե բոցերի պես ծփծփող, ճաճանչագեղ մազերից:

Վաշժություն 3. Կազմել հետևյալ ածականների բաղդատական և գերադրական աստիճանները:

Փարթամ, առատ,հոգատար,գեղեցիկ, ջինջ, արդար, դաժան, բարի,համեստ, թանձր, վարար, ընդունակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քերականությունը պետք է ուսուցանել կենդանի խոսքի նյութերով, իսկ դրանք պետք է քաղել ուսուցչի և աշակերտի խոսքից, ընթերցանության նյութերից, ժողովրդական առածներից, դարձվածքներից, ասացվածքներից։ Ածական անվան ուսուցումը կարևոր է մասնավորապես բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման համար։ Կարող ենք ասել, որ պատկերավոր, գեղեցիկ, տեղին ասված խոսքը մարդուն օգնում է կառուցողական հարաբերություններ ստեղծել թե՛ յուրայինների, թե՛ օտարների հետ, լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, պաշտպանել իր և իր միջավայրի շահերը, սեփական դիրքորոշումները, բանակցություններին հաղորդել դրական լուծումներ: Ուսուցիչը չպետք է բավարարվի աշակերտին պատրաստի գիտելիքներ մատուցելով, քանի որ պատրաստի գիտելիքների մեքենայաբար ընկալումը քիչ է նպաստում ինքնուրույն մտածելու ունակությունների զարգացմանը։

Ինքնուրույն տրամաբանելու, եզրահանգումներ անելու ունակության զարգացման լավագույն միջոցներից մեկն այն է, որ մենք սահմանումը ոչ թե պատրաստի մատուցենք երեխաներին,, այլ փաստերից ելնելով պահանջենք որ նա եզրակացության գա, ընդհանրացում կատարի: Աշակերտները հիմնականում սեփական փորձից ելնելով են եզրակացություններ անում , գիտակցաբար և հեշտությամբ յուրացնում մատուցվող դասանյութը: Լեզվաքերականական շատ երևույթներ ու կարգեր անհրաժեշտ է աշակերտին ներկայացնել նկարագրական ձևով, քանի որ երեխայի համար բարդ է դրանց սահմանումը, երբեմն՝ անըմբռնելի :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1 Ս. ԳՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ-<<Ժամանակակից հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>>

2. Մ. ԱՍԱՏՐՅԱՆ-<<Ժամանակակից հայոց լեզու>>.

3.Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Փ. Մեյթիխանյան,-<<Հայոց լեզու>>

4 .Յ ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հ. Զաքարյան -<<Զնաբանություն>>

5. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ, ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, Գ.ՄԿՐՏՉՅԱՆ , Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ <<Հայոց լեզու>> 7-ւդ դասարան